3.4 Ծառայության դիմաց բաժանորդային նախորդ ամսվա վարձի վճարումը՝ ոչ ուշ, քան մինչև ընթացիկ ամսվա 10-ը՝ համաձայն ՀՀ կառավարության 22.09.2011թ. N1500-Ն որոշման: Վճարումները կատարվում են դրամով՝ հետևյալ կերպ.

№	ՏԵՂԱԴՐՄԱՆ ՎԱՅՐԸ	Կառավարական քաղաքային կապ	Ընդամենը
1.	ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահի աշխատասենյակ	1 x 225 000	225 000
2.	կապի անվտանգություն ապահովող հատուկ ծառայություններ	1 x 100 000	100 000
3.	ընդամենը տարեկան վարձը		325 000
4.			երեք հարյուր քսանհինգ հազար դրամ

3.5 Բաժանորդային վճարումների փոխանցումը ՀՀ ազգային անվտանգության ծառայության հաշվարկային հաշվին՝ ամեն ամիս,

3.6 Իր մոտ տեղադրված հատուկ կապի միջոցների վերադարձը ՀՀ ազգային անվտանգության ծառայությանը՝ տեխնիկապես սարքին վիճակում՝ Ծառայության մատուցումների վերջնական դադարեցումից անմիջապես հետո,

3.7 ՀՀ ազգային անվտանգության ծառայությանը պատկանող կապի միջոցների արժեքի փոխհատուցումը՝ ըստ կազմված համապատասխան ակտի, եթե դրանք կորստի են մատնվել իր մեղքով:

3.8 Ուժը կորցրած համարել ՀՀ ազգային անվտանգության ծառայության և ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի առ 07.05.2007թ.N31-Ա համատեղ հրամանը:

ՀՀ ազգային անվտանգության ծառայության տնօրեն

Գ. Հակոբյան

ք.Երևան 375001, Նալբանդյան 104 ԱԱԾ
ՀՀ Ֆին. նախ.գործառնական վարչության
համայնքների և պետական հիմնարկների բյուջեների
հաշվառման բաժին
հ/հ 900018301011
հվհհ 01507079

ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահ

Տ.Մարգարյան

ք.Երևան Հ.Քոչարի 21
ՀՀ Ֆին. նախ.գործառնական վարչության
համայնքների և պետական հիմնարկների բյուջեների
հաշվառման բաժին
հ/հ 900011177095
հվհհ 01548306

Կառավարման և տեղեկատվության վարչություն հեռախոս՝1-99

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՀԱՄԱՏԵՂ ՀՐԱՄԱՆ

«12» 12 2012
N 61-Ա
օր.N

«___»_____2012
N
օր. N 1

Կառավարական քաղաքային հեռախոսակապի ծառայություններ մատուցելու մասին

ՀՀ Կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայությունը և ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովը, ի կատարումն ՀՀ Կառավարության 2011թ. սեպտեմբերի 22-ի N1500-Ն որոշման, ղեկավարվելով «Ազգային անվտանգության մարմինների մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածով և ՀՀ Կառավարության 2002թ հունվարի 18-ի «Հայաստանի Հանրապետության պետական և համայնքների բյուջեների կատարման կարգը հաստատելու մասին» N 48 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական և համայնքների բյուջեների կատարման կարգի 34-րդ կետի պահանջներով՝ ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովին կառավարական քաղաքային հեռախոսակապով ապահովելու և սպասարկելու նպատակով

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՆՔ

1. ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովին մատուցում է կառավարական քաղաքային հեռախոսակապի ծառայություններ (այսուհետև՝ «Ծառայություններ»), իսկ ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովը վճարում է այդ Ծառայությունների դիմաց՝ սույն համատեղ հրամանով սահմանված կարգով:

1.1 Սույն համատեղ հրամանով նախատեսված պահանջները տարածվում են կողմերի միջև 2012թ. հունվարի 1-ից ծագած հարաբերությունների նկատմամբ:

2. ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԱՊԱՀՈՎՈՒՄ Է.

2.1 Ծառայությունների որակյալ, անխափան մատուցում և սույն համատեղ հրամանով նախատեսված պարտավորությունների կատարումը,

2.2 Կապի միջոցների անխափան աշխատանքը և վնասվածքների ժամանակին վերացումը,

2.3 ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովում տեղադրված կապի միջոցների և բաժանորդային գծի անվտանգությունն ապահովող հատուկ միջոցառումներ՝ գաղտնի տեղեկատվության արտահոսքը կանխելու նպատակով,

2.4 Կառավարական կապի միջոցների տեղադրումը, վերատեղադրումը և ծառայությունների մատուցումն ու դրանց հետ կապված աշխատանքների կատարումը՝ ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից վճարման պարտավորության մասին գրավոր հայտ ներկայացնելուց հետո,

2.5 Կառավարական քաղաքային հեռախոսակապի անջատումը, եթե ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովը չի կատարում Ծառայությունների դիմաց ամենամսյա բաժանորդային վճարումը՝ ըստ սույն համատեղ հրամանի 3.4 և 3.5 կետերի:

3. ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ԱՊԱՀՈՎՈՒՄ Է.

3.1 ՀՀ ազգային անվտանգության ծառայության կապի հանգույցից մինչև իր աշխատասենյակն առանձին մալուխային գծի շարքից դուրս գալու դեպքում վերանորոգման աշխատանքների ծախսերը՝ և կառավարական կապի միջոցների շահագործման հատուկ պահանջների,

3.2 Կառավարական կապի միջոցների շահագործման հատուկ պահանջների կատարումը և աշխատասենյակների պահպանումը, որտեղ տեղադրված են այդ միջոցները,

3.3 Իր մոտ տեղադրված կապի միջոցների պահպանումը,